գառնայվարք յազգիս Հայոց, և ոչ 'ի վերայ բանական բնութեան մերոյ բայց 'ի Տեառնէ արարչէն մերմէ, զի ինքն արարիչ Աստուածն մեր միմիայն պաշտեսցի 'ի մէնջ փառօք թագաւորութեամբ, քան զի ինքն միայն է թագաւոր 'ի վերայ երկնի և երկրի և 'ի վերայ ամենայն արարածոց բանական և բնական կենդանեաց հոգւոց և մարմնոց և թագաւորութեան նորայ վախճան մի՛ լիցի. նա՛ և վկայութիւն ասացելոյս հաստատէ ձեզ անցք և արարք թագաւորաց ինքնակալից մերոց և այլոց 'ի անցելում ժամանակի, և 'ի կատարածի իշխանութեան նոցայ, որում այժմ աներևոյթ լինելոյ 'ի մէնջ, ուրեմն ո՞ւր է թագաւորութիւն Նաբուգոդոնոսորայ արքայի և Փարաւոնի, և Դրիոսի և այլոց թագաւորաց բազմաց, որում դամբարանք և տեղի հանգստեան նոցայ այժմոյս ոչ երևի. ուրեմն հաւատալի ձեզ ընթերցողաց պիտի լինիլ որ ոչ երկաթն փոխարկի ընդ բնութեանս երծաթոյ, և ոչ ոսկին ընդ բնութիւնս յանդամանթի, եթէ ոչ ամենայն բնութիւնն անփոփոխապէս կալ և մնալ արժան է, որպէս աւանդեցաւ 'ի արարչէ իւրմէ, և ոչ ոք առաւելանալ և ոչ պակասիլ կարէ աւելի քանթէ կարն իւր, որում 'ի արարչէն իւրմէ սկզբանէ արարածոց տուաւ նայ, թէպէտ ժամանակ ընդ ժամանակս որպէս ամբարիշտն բարձրանայ և մեծանայ, որպէս մայրս լիբանանու, այլ շտապի